ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՆՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

2025թ-ի համար ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ին հատկացված պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման վերաբերյալ

Ք.Երևան **14 հունվարի 2026թ**

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն (այսուհետև Պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի, որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա մի կողմից և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «Ուսումնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև Կազմակերպություն), ի դեմս Կազմակերպության տնօրեն Ա. Միրզախանյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին Կողմեր), հիմք ընդունելով Կողմերի միջև 2025թ-ի հունվարի 13-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» թիվ 14 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1. և 2.4.3. կետերի պահանջները, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը 2025թ-ի ընթացքում իրականացրել է ակտի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ով, 2-ով, 3-ով և 4-ով ներկայացված՝ 4725 ակ/ժամ ընդհանուր տևողությամբ թվով 243 ուսումնական միջոցառում, որոնց մասնակիցների թիվը կազմել է 4921՝

Անվանում	*2025թ*				
	ՀՀ ՊԵԿ նախագահի 2024թ. Դեկտեմբերի 30-ի № 1741-Ա հրամանով նախատեսված		*2025թ հունվար-դեկտեմբեր ամիսներին փաստացի կատարված միջոցառումներ*		
	Ակ/ժամ	*մասնակից*	*քանակ*	*Ակ/ժամ*	*մասնակից*
Վերապատրաստման դասընթացներ հարկային և մաքսային ծառայողների համար	*ՀՀ ՊԵԿ անձնակազմի կառավարման վարչության կողմից ներկայացված մասնակիցներ*		*ՀՀ ՊԵԿ անձնակազմի կառավարման վարչությունը 2025թ 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների համար վերապատրաստման մասնակիցներ չի ներկայացրել, իսկ 04.11.2025թ թիվ Ն/16-2/225456-2025 գրությամբ խնդրել է չեղարկել 2025թ 4-րդ եռամսյակում նախատեսվող վերապատրաստումները*		
Ուսումնական դասընթացներ հարկային և մաքսային ծառայողների համար	*1350*	*2150*	***85***	***1,342***	***1,684***
Հարկային և մաքսային ծառայողի պատրաստում, որից՝			***55***	***2,143***	***1,151***
առկա			*55*	*1,115*	*1,151**
վիդեոդաս			*42*	*1,028*	***868****
կառավարչական			***13***	***260***	***221***
Ուսումնական դասընթացներ հարկ վճարողների համար	*800*		***90***	***979***	***1,865***
Ընդամենը	***2150***	***2150***	***243***	***4,724***	***4,921***

Պայմանագրով ֆինանսական աջակցության գումարը կազմել է **175,470,500 (մեկ հարյուր յոթանասունհինգ միլիոն չորս հարյուր յոթանասուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ**, որից ՀՀ ՊԵԿ նախագահի 2024թ. դեկտեմբերի 30-ի № 1741-Ա հրամանով հաստատված միջոցառումների իրականացման համար ծախսվել է **151,696,850 (մեկ հարյուր հիսունմեկ միլիոն վեց հարյուր հիսունվեց հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ,** իսկ տնտեսումները (խնայողությունները) կազմել են **23,773,650 (քսաներեք միլիոն յոթ հարյուր յոթանասուներեք հազար վեց հարյուր հիսուն)** ՀՀ դրամ, որը Պայմանագրի 4.1 կետի համաձայն մինչև 2026թվականի հունվարի 24-ը պետք է վերադարձվի ՀՀ պետական բյուջե:

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե Ք.Երևան, Խորենացի 7 ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011054062 ՀՎՀՀ 02647057 Գլխավոր քարտուղար Է. Գևորգյան (ստորագրություն) Կ.Տ.	ՀՀ պետական եկամուտների կոմիտե «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ Ք.Երևան, Աճարոնյան 12/3 Երևանի թիվ 1 ՏԳԲ Հ/Հ 900018002585 ՀՎՀՀ 00107399 Տնօրեն Ա. Միրզախանյան (ստորագրություն) Կ.Տ.

***1151-ից մասնակիցներից 868-ը իրենց պատրաստման դասընթացները շարունակել են հեռավար տարբերակով, այսինքն 868 մասնակիցների դասընթացը եղել է և՛ առկա, և՛ հեռավար, իսկ 283 մասնակցի (1151-868=283) դասընթացը եղել է բացառապես առկա ձևաչափով:**